 Խունկ ծխողին, բուժը, քրտողին:
 Կուզես կաքու քէլք քէլի, ղօռղուուն էլ կը մոռնաս:
 Ճարպիկ մուկ էրկու ոտով կընկնի քալաւ:
 Մանէն մանած ա, պատէն կախած ա:
 Մարդ մարդու դարձ չգիտէ, կէս գիշերին ժամ կը ձենայ:
 Մէկի ուն էր դստ էկեր, մէկը կասէր.—Տո՛ւր, տանեմ կատուիս:
 Մուկ ծակ չմտի, ցախաւելը պոչից կը կախեն:
 Յրմենուն ծով, վրը ընձիկ սով:
 Շորերս խին ա, խօսքերս անդին ա:
 Ուլ մկմրկալով ապրեր ա, դեառ առանց ձենի խատեր ա:
 Ուրիշի լոմա էնեցի, իմ գլուխ էլաւ:
 Չամչիկ խատ խատ, մեղրիկ մատ մատ, օլրուանք տեղը տար-
 տակի:
 Չուր Շուշան զարդըռաւ, պատարագ արձկուաւ:
 Պուտուկ ասաւ.—Սա ոսկի եմ, չերեփ ասաւ.—Սա դո՛ւր էմ:
 Պատիկ մուկ կարաս կաւիրայ:
 Պատիկ քար թալեր ա խոր, ջու՛ չկունայ խանայ:
 Զուր էկեր ջաղացքն ա տարեր, չաղջպան չախախ կը սլտոտայ:
 Զուր իրա առւում կերթայ:
 Փայլեվան ոռքերից բռնայ.—Ձեռնէս դեայ խողին էլ կը խանեմ:
 Քար ուր տեղ ծանար ա:

*) Ասած է Յակոբ Ներսէսեան:

I2.

Գրիի բարբառով.

Անհամ հիւրնդին, կանաչ խըյաբը կաղնտին:
Աղուէսը իրեն պոչը վկայ կը բռնէ:
Անուն իմացանք, անկուն չիմացանք:
Աշխար դմակ, մարդիկ դանակ, կտրէ ու կեր:
Արա խախուտ, մահաճայ կարկուտ:

Գնացիր հորթերը, սև իշուն ճակատը պաղիր:
Դավին թաղ մազէ կարմունչի վրան էր բռներ:

Դու մարդ ես, թէ դաճես ես:

Ըսեմ տեսերեմ, սուտ եմ, ըսեմ չեմ տեսեր, կեճայ սուտ եմ:
Իշուն ըռեհան երկնցուցին. հոտ քաշելու տեղ վերուց, կերաւ:
Լոխմայ մը մթան, կաթէ կով մը կթան:

Խեղ զնըց հարսնստուն, ըսըց,—ըսի լաւ է, քընց մեր տուն:

Կնիկ պէտք է նալապի, օր տղայ բերէ չալապի:

Կնիկս օր մեռաւ, մէկ էլ կը բերեմ, մէրս օր մեռաւ, յուստէն
բերեմ:

Կուր յարան է թէ կուշտը:

Հին ջվլին նոր կանթ պիտի:

Մարդու ոչխար օր էղաւ յիսուն, դանակ սրէ, զարկէ սուն:

Մեր խօրոզը շատ կը կռուի. ամա տէր չունի:

Մեռելը լացող չունի:

Մեռելը լալ չուզէ:

Մինչև օտնմաններս շտկէ, կենեմ կայնեմ:

Մութը փուշ է, պագը անուշ է:

Ուլութեն, չէ գըտե արքայութեն:

Վեզ ուտէ եղն ու ճմուռը, վեզ դարնէ գլուխը քարն ու դուռը:

Սոխին դէմ սխտոր ցանէք:

Օսկուլ (ձկնկուլ) էղեր է:



I3.

Վաղարշապատի խառն բարբառներով *).

Ագռաւին արախճին տուին որ սիրուն գլխի, գլխին դնի. պտը-
տեց—պտըտեց, բերեց իրա ճուտի գլխին դրեց:

Ազգի թքանք—ցեղերին գետնով ա տալի:

Ածան հաւը կրկյան կըլնի:

Աղբէր որ լաւ ըլնի, Աստուած էլ մի հատ կունենայ:

Աղուէսի դունչը խաղողին չհասաւ, ասեց.—թըթու ա:

Աղուէսի վկէն իրա պոչն ա:

Աղաք կէթամ, գլխիս կը տան, յետ կաղնեմ ոտիս կտան:

Ամեն մարդ գիտայ իրա մարդի զորք:

Ամեն մարդ իրա մեռելը լաց կըլնի:

Ամեն օր ջուրը գերան չի բերի:

Ամպ օր գէլի համար հարսանիք ա:

Ամպ օր պառուին առաւօտ ա:

Անգէտ մարդին առայ շալակս, ասեց.—Վէ դիւր, ոտքերս ցաւաց:

Անթառամ ծաղկին թուփել չը կայ, բողբոջ պառուել չկայ:

Անձրեւ ա գալի, կտուրը կաթում ա. կնիկն պառկե, աղջիկ ա

բերե:

Անձրեւ ա գալի, կոշտը քարի դարձն ա լաց ընում:

Անճարն ա կերէ բանջար:

Անուենում կայ, ամանում չկայ:

Անուենը տուր, սուճիէն դցայ:

Անջուր ջաղաց, անկրակ բաղարջ:

Անց իւթս, խաթիյա դուրսի:

Աշխար արօտ, մենք մէջը կարօտ:

Աշխար դմակ ա, ինքը մէջը դանակ ա:

Ապրել կայ, դմակ ա, ապրել կայ, դանակ ա:

Առանց ի ձի առնել մտուրք ա չենում:

*) Գրի առած է Արուսեակ Հայկունի. Վաղարշապատի ժողովուրդը մեծաւ մասամբ հին ու նոր զաղթականներ են զանազան տեղերէ հաւաքուած, որով ներկայ առածները խառն են եւ փոքր ինչ փոփոխութիւն գտած. իսկ կայ զուտ Վաղարշապատցիներէ առնուած առածներ, որ ներկայիս կը յաջորդէ եւ զրի առած է Վաղարշապատի վերաբնակիչ Հայթաղ գիւղացի. Վաղարշապատցին, որպէս բուլանիցին, ունի անհաշիւ առածներու պաշար. ընդհանրապէս բանակուի միջոցին կը դործածէ:

Աստուած ազաւաւի ձէն լսի, վարդիւարին ձին կը դնի:
 Աստուած ազատ էնայ լապտարակի քացուց:
 Աստըծու ճամբին չի գայ, սատանի ճանբէն չմտ:
 Աստուած տայ լազուն, որ տայ ճազուն:
 Ատըմիկ կանի անդըմիկ:
 Արջն իրա զովըց:
 Արոր խախուտ, միանէն կարկուտ:
 Արքայութունն եմ ասում, դժողւքն ձեռս չի ընկնի:
 Աւեր քաղաքին, չէն անուն:

Բամբակը կտրանն են ցանէ:
 Բանն որ կայ, էշ ա, քչես, կէթայ:
 Բանն օրուան, հոգ տարուան:
 Բանգի քանդած Աստուած չը քանդի:
 Բեղ դրեց մուրքի վրէն:
 Բրդի տանը կուլայ չի ընի:
 Բրինձ փլաւը կուտէ ամնի մէջ:
 Բօզից աղջիկ առ, բօզին աղջիկ մի տայ:

Գէլը սովածութունից չի կարում դարը նիւնել, ասում են, էն-
 քան կերել ա; չի կարում նիւնի:

Գէլը որ ամալ օրից վախենայ, մի շուշպայ կը կարի:
 Գէլի հետ դառն ա ուտում, տիրոջ հետ վայմլուկ ա անում:
 Գէլը ընկաւ օչխարի մէջ, վայ մէկի տիրոջ:
 Գէլնեղդ շան դլուխը գէլի փորին ա:
 Գիժը դժին տեսաւ, ճակատը մի թիզ լէնացաւ:
 Գիժը քարը գցեց ֆորը, հարիւր խեղճով չկարացին հանեն:
 Գիշերն ի ման գալի, դու ցերեկը ռասս էկար:
 Գիտուն ալուէսը չորս ոտով քալաք կընկնի:
 Գոգդ նստեմ, միւրուքդ փէտեմ:
 Գողն էկաւ, սե էրես գնաց:
 Գողը, որ տանից էլաւ, եզ էրդիկով դուս կը գայ:

Դարտակ փէտին շուն չի հաջայ:
 Դէ, արի, էշը ցիւից հան:
 Դիւին դժողք շանց չտաս, արքայութունի ճանփէն չիմանայ:
 Դուզ խօսողի գտակը ծակ կըլնի:
 Դրսե ըլնում ա քահանայ, տանը ըլլում ա սատանայ:

Եզը ինչքան ընկնի, կաշին մէ ձիաբեռ ա:
 Եզն ընկաւ, դանակաւոր շատացաւ:
 Եկող մօրս հալն ա հարցնում, հօրս հալը հարցնող չկայ:

Նղը ու մեղը շան տկումը:
 Նա ազգաւին հաւանեցի, ազգաւ ինձ չհաւանեց:
 Նա ասում եմ արեւոյ եմ, էն ասում ա, քանի՞ տղայ ունես:
 Նա գանձ կանեմ, նա տանձ կասի:
 Նա էկայ կուղէ կուղ, դու էլ էկար ապրապուգ:
 Նոթ ծով մէ թեւ մանծով կը ներկի:
 Նա եմ կուտ տալիս, խալիսի դռանն ա ածում:

Ելը իմացաւ, ետք բէլը իմացաւ:
 Ել օղլու աչքը որ մարդի լիս տայ. իրանը կը հանի, դէն կը քցի:
 Եծը իծի համար լաւ ա, քանց մի սուրու օչխար:
 Եծը իրա ջանի դարձին, զատաբը ճրագուի ա ման գալի:
 Էն աղուէսն էր, դու էլ պոչն իր:
 Էն աչքը որ լիս չի տայ, թո՛ւ քոռանայ:
 Ելը էլի էն էն ա, փալան ա փոխուեա:
 Ելը ինչ գիտի նուշ ինչ ա:
 Ելը ինչ մօտ կապեա. եա խուս կը սօվորի եա խասախար:
 Ե՛լ, մի սասկի, դարուն կը գայ եոննայ կը կանաչի:
 Երէխէն մահանայ, մէրը կշտանայ:
 Երէխէն պատճառ, մէրն օրոճար:
 Երեսդ սիւստակ, կըճըճի տակից:
 Երկու ձմերուկ մի ձեռքով չի բռնուի:
 Երես տուինք, աստառ ուկեց:
 Երկու ախպոր գլուխ մի գերեզման չի մտնի:
 Երկու դիմի քամաջայ անողը շաշ կընի:
 Երկու կնիկ դիւան նստած էին. մէկի տղէն էկաւ.—Մսուրքը
 քանդուեց, ասեց. մէկէլ կնիկ դնայ. ասեց—Մսրը քանդուեց, Երկու
 օր ետքը թուղթ էկաւ.—«Մսրը քանդուեց»:
 Երկու մեռել մի պատան չի դրուի:
 Երկու շուն մի տեղ գան, կը վազի, որ գութան լծի:
 Երկու ջուր մի առուով չի էթայ:

Ըստեղի չորթան գնացե ընտեղ էղելա Մաքաճաօի:

Թագա հաւեր դուս են ընկէ, Երկթէ ձու են ածում:
 Թունա քացախը իրա ամանը կը ճաքացնի:
 Թքեցին Երէսին, ասեց.—Անձրի ա գալի:

Իծին դինի էն տուեր, գնացեր գլի հետնայ կուխ արեր:
 Իմ անումը տուր, գլուխդ դէմ արա:
 Իմ զուռնէն չիչեմ, ինչ ա քու էլը հուշա չընի:

Իմ սեփիլութեն, քու տընկտնկալ:
 Ինչ համար կանես, քեզ համար կը սովորես:
 Ինչանից էլի, ինչ լող ա սարվացնում:
 Ինչ ա պոչատ գթիլի նման մէջ ես ընկնում:
 Ինչ կը մնայ ֆուֆուռն (կերակուր), թող պատուի կուկուն (փոր):
 Ինչ կուտեն բողբոջ, թո ուտեն խողբոջ:
 Ինչ կուտի տաճիկ, թո ուտի խաչիկ:
 Ինչ չի տեհել պատից կախ, հիմի տեհել ա ճակտից կախ:
 Ինչքան քցես կատուն, թաթին կընկնի:
 Իրա աչքի գերանը չի տենում, խալխի աչքի մազն ա տենում:
 Իրիկուայ արածը գթած ա, կերածը կորած:

Լարան լարան, մազէ լարան, ամենքին տարան, քեզ չտարան:
 Լաւ եղից, լաւ բընձից, լաւ տանակին կըլնի:

Լաուութին արա, գցայ, ջուրը թո տանի. բալդ բիւման խալդ
 բիւր:

Խալիչէն մաշաւ, խաւը վերացաւ:
 Խալխի ձեռնով վարդ մի բռնի:
 Խանչալի ետէն կը լաւանայ. լեզուի ետէն չի լաւանայ:
 Խորովածի իջանի էկար, էշ խանձելու պատահար:
 Խուփը գլուխից, առաւ կըճըճին:

Մակ ասեղ գետին չի մնայ:

Միտը ինչ ա, եղը ինչ ըլնի:

Մուռը դնաց հարողբատուն, ասաց.—էս լաւ ա քանց մեր տուն:

Մառ չի էլեր, որ վրիցը քամի չանց կենայ:

Կայ աշխարհի, չկայ անապատի, կայ անապատի, չկայ աշխարհի:
 Կատուին ասին.—քաջդ գեղ ա, ծածկեց:

Կատուի հետ շատ դնես, ձեռդ կը չանգուի:

Կաքաւենքը նալեցին, ազուաւներն էլ ոտերը վէ կալան:

Կարմիր կովը իր կաշուց դուս չի գայ:

Կերեր ա ճալուէն, հէծել ա էշը:

Կերեր էս խարիսէն, հէծեր էս գէշ:

Կողնին դրին խալիչին, գլուխը ընկաւ գետին:

Կովը ստակեց, կաթը ցամաքեց:

Կոտրաւ ծուռ, կպաւ շիտակ:

Կուժը ջրի ճանփին ա կոտրուում:

Կնւժ քեզ կասեմ, կուլայ դու իմացի:

Կուշտը սովածին մանր կը բրթի:

Կրակի դէմը չախմախ կրակ չի տայ:
 Հասկացողին մէկ ասա, չհասկացողին հա կաց, ասա:
 Հայրին՝ լաւ ա օխտը տէքոր կնկանից:
 Հաստը բարակի, բարակի ֆոգին դուս կը գայ:
 Հաստ ու բարակ մէկ գին ա:
 Հա տաք ա փչում, հա պաղ:
 Հացը ծնկան, աչքը կնկան:
 Հացը տուր հացարարին, մէկէլ էվէլի տուր:
 Հաւը իրա կտից չի փախնի:
 Հաւ չէլած՝ թառ ա թռնում:
 Հաւը տանը մնայ, կուտը ուտի:
 Հաւը քանի չաղանայ, ուր կը նեղանայ:
 Հաւը երազին՝ իրան կորեկի ֆորի միջին ա տենում:
 Հեռացանք աչից, օտարացանք սրտից:
 Հոգուն հանգուցելոց տուել ա:
 Հալարտացողի տակ այլազ ա:

Զի չէլած մսուրք ա կապում:
 Զին ու ջորին կուռւին, մէջ տեղ իչին սպաննին:
 Զին տիրոյր տակին հող կանի:
 Զուկ բռնողի ուր կը թռչի:
 Զուկը գլխից կը ֆոտի:

Ղաւապխանից շունը մի ոտ տարաւ, ասաց. — Ինչ արիր, քեզ արիր:

Ղուրպան էլնեմ էն շանը, որ սարի գլխին հաչում ա, դողը թողմ փախնում ա ...:

Ճանճը ինչ ա որ ճենճն ինչ ընի:
 Ճղճղան մարդիցը խի ես վախում, վախեցի էն մարդիցը որ
 գլուխը քաշ ա էթում:
 Ճրագն իրա տակին լիս չի տայ:
 Ճուտը ձուի միջին բելու կանի:

Մաղաւորի մազն ա թափէ, անմազի մազն ա էկէ:

Մալը վանքերուց, կուիւր գէլերուց:

Մալ մագին, մուլ էգին, ուրախութուն դուստր ու որդին:

Մանէն մանած ա, պատէն կախած ա:

Մաշակարին մաշիկ չի ընի:

Մարդամիջի մարդ ունենամ, հազար բուման պարտք ունենամ:

Մարդ բան ունենայ, անի, որ բան չունենայ, թո մեռնի:

Մարդիս անունը չեմ իմանում, տէքորս անունը ոնց իմանամ:
 Մարդ մարդի նման ընի, էշ չի ընի:
 Մարմանդ գետիցը վախեցի, զժման գետից մի վախի:
 Մարօն հաւնաւ Կարոյին, Կարոն չը հաւնաւ մարոյին:
 Մեզանից ասեղ ուտողը մախաթ կը քաքի:
 Մեր դռան կուտի, ուրիշի դռան կը հաջի:
 Մէկի սուն ա դուռ էկէ, մէկին ասում ա, տուր տանեմ կատուիս:
 Մէկ կողեկ տուեցի, բերանդ բաց արի, քանի կողեկ տամ որ
 կալնես:

Մէկ եղնով քեարվանի մէջ ա մտնում:

Մէռելատունը չի գիտի որտի ա, քերդանը վերա կալնում վա-
 դում ա:

Մշակին մշակ, ծակ օռին եօրդան դուռակ:

Մի ծամելու էրծաթ ունենայ, Ասուն Ասատուր կը կանչի:

Մինչի առուն ջուր կը գայ գորտուն աչքեր դուռ կը գայ:

Մինչի ասածդ կատարի, դավի պոչը գննին կը հասնի:

Մինչի խիօքը պակուի, գծին էրկու տղայ կըլնի:

Մինչի Շուշան զարդարի, պատարագը դուռ կը գայ:

Մի ցռան կով նախի անունը կաւիբի:

Մի փուք բամբակ խրի ականջդ, անցի:

Մի մատ հաց ա, տասի բերան ա ընկէ:

Մինաս գինայ նախի դուրը կը քշայ:

Նախի միջին իշի հակառը պագիր:

Նախի միջին սանամօր էլը հեծար:

Ներքե թքեմ միրուքս ա, վերե թքեմ ունքս ա:

Շահն ի շահոնց, քաքն ի պապոնց:

Շամօն ըմեն աղբուր կը քաքի, բա ջուր ճր տե կը խմի:

Շան ասին.—Խի ես հաջում. Վարդ եմ վախացնում.—Բա
 խի ես տում. Վարդից եմ վախում:

Շան գլուխ ա թաղած, տեղը չի սատկում:

Շան փեռակը ինչ ա, ոսկոր կըծել:

Շան պոչը մանկեանայ որ գնես չի դգուի:

Շատ համ ունէր խանձրամն էլ տուեց վրէն:

Շաքար շան բերան:

Շէմը չորի, ով գայ կը գլորի:

Շնից գութան չի լծուի:

Շունը զասաբխանից ոտ գողացաւ, իրա ոտը կտրեց:

Շունը զօրովէն ավի տանես, կը դառնայ տիրոջը կը կծի:

Շունը էն շանից, էրկուս մէ տանից:

Շուն շան միս չի ծամի:

Ո՛չ էժ ունենք, ո՛չ ուլ, սատանի անկաջը խուլ:

Ոչ կնկան եհրիպար կայ, ոչ ձիան:

Ոտդ կարպետիդ գետայ մէկնի:

Ուներդ շուշտ, փորը կուշտ:

Որ դրախտից բաժին չունեմ, թող էշերը թաւալեն:

Որչափ մարդ չարանայ, կեանքը կը կարճանայ:

Ուզում ես կաքուի երիւ էթաս, տգուււրնն էլ ես մօռանում:

Ուզող ուզողից, բուրդը դողից:

Ուլ քթոցի տակին չի մնայ:

Ուղտի խաղը կարմնճի վրէն էր բռնէ:

Ուղտին համեցէք արին հարսանիք, ասաց շնորհ չունեմ հաղա-
յու, ես Կողբ դրկեցէք աղի, ես Շարուր բրնձի:

Ուղտը նիւէ, կուգէ կուզ ա ման գալի:

Ուղտը բաղնիսպան:

Ունեցողին ամեն օր բարիկենդան ա:

Ունքը շինելուն աչքն էլ հանեց:

Ուրազ իրա կոթը չի տաչի:

Չալ օձի կծածը չալ պարանից կը վախենայ:

Չամիչը որ չամիչ ա, պսչ ունի:

Չարչին իրա իչի խասիաթը դիտայ:

Չիմանում ուլ ա մեռէ.—վայ վա՛վիչը ա կանչում:

Պղնձումը փլաւ շատ կայ, քեզ ինչ:

Ջանելի (կին) փեւը իրան դուււման ա:

Ջուրը ջաղացքն ա տարէ, նա չախչախն ա ման գալի:

Սանտ ծեծողին «դըխիչ» ա անում:

Սերը սաւորն ա կերէ, թանը մօլորն ա կերէ:

Սե շանը դա՛րադուււ ա կանչում:

Սէլը չի գուռում, սէլուրն ա գուռում:

Սէրը կպաւ աթարից, աթարը կպաւ սլառից:

Սիպտակ շունը բաւրակ ծախողին վնաս ա:

Սիրուն կրնկայ ծոցը պուլի, գէշ կնկոյ ձեռի հացը կե:

Սոխն իստակեցի, տուի ձեռը:

Սոխ չես կերէ, խի ա սոխաֆոտ գալի բերնէդ:

Սըրբին խունի ու մօմ մի խօստանայ, էրէխին՝ բլիթ:

Վատ հարեանը մարդի մարդ կը չինի:

Վատ հարեանը մարդի հաճաքատէր կանի:

Վատ օրը կը լաւանայ, վատ մարդը չի լաւանայ:
Վարդապետին ասին.—տղէդ մեռնի, ասեց.—Վարը վարի, վա-
րոց գցի:

Վարդը վե կալ, փուշը կը բակի:

Վարդի սիրուն բաղի պատերն ա պաշոււմ,

Տախտեխ չես կերէ, փորդ խի ա կսկըծում:

Տանձ ինձ, խնձորն ինձ, սէրկելիւն էլ սիրտս կուզի:

Տանուտէրի վկէն իրա գզիւրն ա:

Տանու տիրոջ օրհնեա տէր չկայ:

Տնէ տուն, տուն կաւիւրի, գեղէ գեղ, գեղ կաւիւրի:

Տկուր ջանին կատու շլակելն էր պակաս:

Տուն ճետ, ելն ի վեր ճալոզ:

Տուն չկայ ալլէ փոշի, գլուխ կը կապէ կարմիր փռի:

Տուէն ընկէ, տուծկէն չնկէ:

Յորենը ֆորից պալի, որդին հօրից:

Փառք քեզ դարէ հաց:

Փող տուեցինք, խաթայ առանք:

Փոր ա, խոր չի:

Փուշը փուշ ա, մարիժաթը անուշ ա:

Քամակդ արա տղիդ, հաց կե, էրէսդ արա մարդիդ հաց կե:

Քանի կասի, իրա էշը կը քչի:

Քարը վե կալ, տակը դիր:

Քարն իրա տեղ ծանաթ ա:

Ք. . . չեղած՝ աթար ա էլէ, պատին կպէ:

Քաւորի եզան գեղիցն ա:

Քեաչալ որ դեղ իմանայ, իրա գլխին կանի:

Քերն ասեց, աղբէր ունեմ, աղբէրն ասեց՝ քիր չունեմ:

Քու պտպրտիչ իմ շան խրկիչ:

Քօռի շատ այնուամն ա, թէ մումը թանկ ա:

Քօռ չարչին կը նստի, իրա էշը կը գովի:

Օձ ա խուզում:

Օխալը գիւին ամանաթ ես տուէ:

Օձը մայրամաֆոտից կը փախնի, մայրամաֆոտը պնչի աղաքը
կը մխայ:

Օձը ջրի վրին մարդի չի խէթի:

Օսկու տանող, օսկու կը բերի:

Օրը գնում ա, խաթէն չի գնում:

Օր ջոջութեն՝ առակութեն:



I4.

Վաղարշապատի գուռ բարբառով *).

Ալանի էր, խնձրհամեց էլ
 Ախպէրն ախպօր բորը չի ուզի, որ ինքն էլ չընգնի
 Ակուաւի ճուտը իր մօր հըմար ազիզ ա
 Ակուաւի տեսած սերմը չի կանանչի
 Ակուաւի ձէնը որ Աստուծ լսի, Վարթիվորին ձին կը գայ՝
 Ահը (երկիւղը) չատ ա, քանց մահը
 Ահի տարին ինչ իր, որ մահի տարին ինչ ըլնես
 Աղուէսի ճնաղն՝ իր պոչն ա
 Աղքատի ոռը դուս էր էկէ, մէկն էն դհիցն տսեց.— Տուր, տա-
 նեմ մեր կատուին
 Ամանաթ ձի նստողը, քեզ վե՛կ կը գայ
 Ամէն մարթ էլ մէկ չի ըլնի
 Ամէն վախս տատը գաթա չի ուտի
 Ամէն օր իծի ոռն ա բաց, մի օր էլ թող ոչխարին ըլնի
 Ամէն վախս ջուրը գերան չի բերի
 Ամբ օրը գիլին հարսանիք ա
 Անալիւր խաղը ա, մնաց որ ալրոտուում ա
 Անաստուծ տեղը կաց, անախայ տեղը մի կենայ
 Անձրև օրը հաւերին ջուր տնող չատ կըլնի
 Անըմումը կայ, ամանումը չկայ
 Անըմը տուր, հացը քցայ
 Անչուն գեղ ա մտէ, անպետ ման ա գալի
 Անողը պրծել ա, առողը չի պրծել
 Այխարքի սուտը չատ ա, քանց ըղորթը
 Այխարքը փիլափեան ա, մինը նիլնում ա, մինը վե գալի
 Այքատեսուկ, բերնակարօտ
 Աչքը շինելու տեղ, ունքն էլ ծռեց
 Ապրել կայ դանակ ա, ապրել կայ դմակ ա

*) Սոյն Վաղարշապատի բուն առածները զրի է առնուած գրաշար Յարուժին Աւչեանի հաւաքածու, ցարդ անտիպ ուսումնասիրութենէն։ Սա ո՛չ թէ նստակեաց ժողովածու է, այլ հատ - հատ հաւաքուած ժողո-վրդեան բերանից՝ որ բանակուռի միջոցին կը գործածեն։ Ե. Աւչի

Անջուր մի բորկացի:

Անջուր ջաղաց, անկրակ բաղարջ:

Ասեղը քեզ խրա, մախաթը հարևանիդ:

Աստոճ խառադ չի՝ իրար քցող ա:

Աստոճ ազագի ալափստրակի քացուց:

Աստոճ ազագի լուի քացուց:

Աստոճ սարը կը տենայ, ձինը կը դնի:

Աստըձու պհած դառը, գեղը չի ուտի:

Արսըզը մեռաւ . . . ցից մնաց:

Արինը ջուր չի դառնայ:

Արչն իր անուն կը գոռայ:

Արտը խախտըթ էր, միանէն կարկուտն էլաւ:

Առաջ էմ դնեմ, գլխիս էն տալիս. թէ եզ էմ մնեմ, ոտիս էն

տալիս:

Առանց ձիու մտուք ա կապում:

Առաջի քիֆէն համեղ կընի:

Առաջի խօսողը չի զիզա, թէ եղի խօսողն ինչ կասի:

Առաջի կնգայ պաղն անուշ, եղի կնգայ քաջն ունուշ:

Առաւօդուայ արեից ինչ տաքացայ, որ իրիգնապըհին ինչ տա-

քանամ:

Առաւօդուայ օտը իրիգուայ խեղիցը լաւ ա:

Առել ա կուտը, մտել ա մութը:

Աւելի քիֆէն փոք չի ծակի:

Ափսոս չաքար՝ շան բերան:

Բանը շուտ վեկենալը չի, Ածու աչողալն ա:

Բանն ո՛վ անի՝ ես ու դու, հացն ո՛վ ուտի՝ ես ու դու:

Բարեկամը չէթալ չգալով ետդացաւ, ետդը էթալ ու գալով

բարեկամացաւ:

Բարեկամի հետ կեր ու խում արա, առ ու տուր մի անի:

Բերան, բերան, հազար բերան:

Բերնով ուղած, ոռով կերած:

Բզի գլխին բռնձքով ալ չի ընի:

Բոզ կնգայ գլխին հարիւր լաչազ կայ քցած:

Բողից ախչիկ առ, բողին ախչիկ մի տայ:

Բողքը քանի սեհրազ ընի, գլուխը մեմենձ կը քցի:

Բոչէն փառայ չի դառնայ:

Բոչի եղը որ շատ ընի, կէտն էլ ոռին կը քսի:

Բրըդին կուլայ չի ընի:

Բօզ ձին գարի չի ուտի:

Գառը դիլին պահ տուին:

Գառիցը շուն, շանիցը գառ:

Գեյը սովածութենից դարը չէր կարում նիւնել, ասեցին:—Գուտիրու հէրն անիծած, ընքամ կերել ա. որ դարը չի կարում նիւնել:

Գեյը տարածին ա փռւման, տէրը թողածին:

Գեյն ընդաւ սուրբի մէջը, վայն էկաւ մէկի տիրոյ:

Գեյ կաղնի, գերան կը կոզրի:

Գեյըցին որ ծիւ-ծիւ ոսկի դառնայ, ջեբդ մի քցի:

Գիդունի հետ քար քայայ, անգեգի հետ փլաւ մի ուտի:

Գիդուն աղուէսը ջուխս ոտով ա թալաք ընդէ:

Գիլի անըմն ա դուս էկէ, ամա աղուէսը շասդան ա կոզրում:

Գիլին ասեցին:—Շլինքդ խի ա հաստ, ասեց:—Իմ բանը ես իմ ձեռով էմ տենում:

Գիլիցը ճամազըդ չի ըլի:

Գիլի գլխին աւետարան կարթացին, ասեց:—Հարմայ, շնտ արէք, սուրուն գնաց:

Գիլի գնաց հարսնըստուն, ասեց:—Ըստէ լաւ ա քանց մեր տունը:

Գիլի շամանչի, գժատէրը կամանչի:

Գիլի մի քար քցեց ֆորը, հազար իմաստուն չկարացին հանել:

Գիլի գիդայ նախիրը դօր կը քչա:

Գնա մեռի, արի սիրեմ:

Գողը որ տանու ընի, եղը յերթովը կհանի:

Գովացին Ալիխանին, թռաւ քաքեց պաղըհանին:

Գորտի էրէսին թքեցին, ասեց:—Անձրեւ ա գալի:

Գոքիդ նստեմ, միրուքդ փխեմ:

Գարմանը քունը չի, դարմանանոցը հօ քննն ա:

Դիւին դժողը շանց չտաս, արքայութենի ճանփէն չի ճանանչի:

Դու մի բունի գողին, որ գողը քեզ չը բունի:

Դուզ խօսողի գլուխը ծակ ա:

Դուռը փակ պըհի, որ հարեանիդ գող չըռնես:

Դուս գայ դուռը քըհանայ, ներս գայ տանը սպտանայ:

Սաւէն տիրոնչը ցաւ կը տայ:

Սաւաանը ռեհան չի դառնայ:

Սզը որ վեր ընգնի, դանակաւորը կը չատանայ:

Սզը վեր էն ունում, տակիցը ֆորթ էն ուզում:

Սքըմին խրատ տուող շատ կըլնի, հաց տուող քիչ:

Սղ ու մեղր շան տկում:

Եղը թանգ ա, ճմբռուն էժան:
 Ես ջաղացի ոռն էմ լիզում, դու ջաղացպանի:
 Ես ասում էմ.—մի աստ էլը քաձ ա, նա ասում ա.—քուռակն
 էլ ա քաձ:

Ես առնձ էմ ասում, նա գանձ ա ասում:
 Երկար մարթու խեղը չօքերումն ա:
 Երկար մարթը ախմախ կընի, կարճ մարթը չախմախ կընի:
 Երուսաղէմ շուն չը կնյ:

Զուռնի հուճաբը պիպիչն ա:
 Զոռով, զոռով շունը կապում էն պանրի տկից:

Էգցուայ բանին, ձին ա էկել:
 Էլած սրտին, քաք մխիթարանք:
 Էլաւ սիրտ՝ կդրնց գլուխ, իշաւ սիրտ՝ չը քթաւ գլուխ:
 Էլոնց հարսը սիրուն կերես:
 Էժան մսի խաշուն շունը չի կերել:
 Էժը որ էժ ա, տեղը քերում ա, նոր ա, նստում:
 Էժն իժի հրմար լաւ ա, քանց մի սուրու ոչխարը:
 Էն քանդած խոռը, էդ կոշոր չի շարի:
 Էշ նստելը մի այիբ ա, վե գալը էրկու:
 Էլը մատաղ չի ընի, ամա իշագինը մատաղ ա:
 Էշն էլի էն էշն ա, փալանն ա փոխած:
 Էլը որ իշի մօտ կապես, եա զռալը կը սաւրի, եա տռելը:
 Էլը պրծել ա, տընգին կըծել ա:
 Էշն ինչ գիդա նուշն ինչ ա:
 Էշն իր ախոռին չի զռայ:
 Էշն աշխատի, ձին ուտի:
 Էն վնդ էր, որ էլը կաղ էր:
 Էնքան անբաւարքն ա, որ ծովն էթայ ծարաւ կը գայ:
 Էս օրուայ բանը, չեն թողայ յէքուց:
 Էրէս մի տայ, աստառ էլ կուզի:
 Էրէս տուինք, աստառ էլ ուզեց:
 Էրէսը աստառից չեն կգրի:
 Էրեխէն մնանայ, մէրը կշտանայ:
 Էրեխէն բանի գիր, հետը գնայ:
 Էրկու գժին, մի խելօք կայ:
 Էրկու լաւը, մի տեղ չի ընգնի:
 Էրկուսն էլ մի սանդրի կտաւ էն:

Ընչանք աղը դայ, մատաղը կեթայ:
 Ընչանք էրեխէն լաց չընի, մէրը ծիծ չի տայ:
 Ընչանք խելօքը մտածի, գիտն իր բանը կը տենի:
 Ընչանք Շուշան զարթարուի, ժամը կարցակուի:
 Ընչանք չը պղտորուի, չի պարզուի:
 Ընչանք չը դայ եղինը, չ'իշուի առաջինը:
 Ընքան կացար, որ ջուրը կարմունջը կոխեց:

Թագէն մաշ, հինն արեաբաօխ:
 Թանը քունը չի, Թանամանը հօ քոնն ա:
 Թասիբը քցել էն շանը, շունը չի կերել:
 Թարխունը քօքին կը բուսի:
 Թացը չորի հեանայ էրվում ա:
 Թաքուն բանը քառսուն օր ա, բէլլու կանի:
 Թէ անթառան ծաղիկը կը թուռմի, բողն էլ կը պառաւի:
 Թէ մտքումդ տեղ ընի, պուտուկումդ էլ եղ կըլնի:
 Թթու ա՝ Թան չի, ամեն մարթի բան չի:
 Թող փորս սոված ընի, անգաջս դիմը ընի:
 Թող ասեն գեշ ա, Թող չասեն էշ ա:
 Թողում էն որ աղէն հօրը քաշի:
 Թքի ձեռիս, քսեմ էրեսիդ:

Ժամից ես եմ գալիս, ռօղորմի Աստուծո՛ւր դժու ես ասում:
 Ժամի դուռը բաց ա, շանն էլ էրէս:
 Ժամի դուռը շատ էլ բաց ա, աբուռ հայրն ինչ ա էկէ:

Իծի կիճը քոր գալիս, չօբանի դագաճագին ա քսում:
 Իմ ասեղ ուտողը մախաթ կը քաքի:
 Իշի պոզերը չէր դուս էկէ, ասեց.—Շըլա քուռակ էմ:
 Իշին ասին մի մարիճաթ խարջա, ոտը վեկալաւ, մի պինդ տուեց:
 Ինադ արեց ելերին, ուր սուեց գելերին:
 Ինչ աղբրից մարթ ջուր խմի, էն ախպրին քար չի քցի:
 Ինչ կուտի տաճիկը, Թող ուտի եռաշիկը:
 Ինչ կուտեն բողբըրը, Թող ուտեն խողբըրը:

Լացացնողիդ մօզը գնայ, ծիծաղացնողիդ մօզը մի՛ գնայ:
 Լաւ ա մի պուտ բախտը, քանց թէ մի կարաս իմաստութուն:
 Լաւը Թանը չի, Թանամանն ա:
 Լիզուի տակին փուշ չը կայ, որ ծակի:
 Լիզուի բողբ, կնգայ բողից վատ ա:
 Լեզուն լազ-լազ, գլուխը ծած-ծակ:

Լիսը փուշ ա, մութն անուշ ա:
 Լօլօ - Լօլօ, քրդի աղչկան էլ Լօլօ:

Խալիսի ձեռով ձուկ չեն բռնի, փուշ կը բռնեն:
 Խաչը խաչապաշտին խռով ա:
 Խանչն ա տէրը զօրաւոր արէ:
 Խելօք մանուկը օրօրոցում բեկնու կանի:
 Խեղքը մենձ ու պուճուրի չի, բանականութենումն ա:
 Խիարը ֆօխցն ա ծուռը:
 Խուրցը կեմն անջաղ ածէր:
 Խուփը թոլ էլաւ, պուտուկը քթաւ:
 Խօսքի սուտը շատ ա, քանց ըղորթը:
 Խօփդ սուր ա, ամա հանդը բաժանովի ա:

Ծանդը նստի, որ լիդր գաս:
 Ծանդը քարը իր տեղումը կը մնայ:
 Ծանդը տեղդ մի թեթեացնի:
 Ծիծը ծոցին ժաժ կը գայ:

Կաթի հետ մտածը, հոգու հետ դուս կըլնի:
 Կակուղ էրէս հրեշտակին, սատանէն քեզ - քեզ վրայ կտայ:
 Կարըճին ասին.— Կիճդ դեղ ա, խոր խրեց:
 Կարմիր կովն իր կաշուցը դուս չի գայ:
 Կատուին հաղ ա, միտնը մահ ա:
 Կատուին ասին.— Շեռդ դեղ ա, խոր թաղեց:
 Կատուին ասին հէրդ ա լաւ, թէ մէրդ, ասեց.— Էրկուսն էլ
 նա-օ, նա-օ:

Կատուն որ կատու ա, շատ որ հետն էս ընդնում, թանթը
 քցում ա էրէսդ:

Կէսուրըս մեռաւ, տեղս լենացաւ:
 Կը կակըղես, կուտես դիպլաւ:
 Կծկըճու, քաջեմ խարսնցողուն:
 Կծկըճու, փառք Աստըճու:
 Կոզնուն դրին խալիչին, թոլ էլաւ:
 Կոշոր նստել ա քարի գլխին՝ լաց ա ըլնում:
 Կովը մեռաւ, խաւը վերացաւ:
 Կովը ֆորթին, ֆորթը կովին, գլուխը ցաւի նախարարածին:
 Կոճ քեզ ասեմ, կուլա դու լսի:
 Կուշոր սովածին մանդը ա փրթում:
 Կռուի մէջը չիւր ու չամիչ չեն բաժանի:

կտուրը քանդել ա, որ ձին քերելու դարձ չը քաշի:
կրակի մօտ չախմախին չեն տայ:

Հալալը որ մազ դառնայ, չի կդրուի:
Հաւամբ որ գերան էլ դառնայ, էլի կը կողորուի:
Համ նախին ա տալի, համ մխին:
Համ էլայ խցից, համ էլայ պ. . . :
Հայլին առ էրեսդ տես, որ ուրիշին փութ չդնես:
Հաչան շունը, մարթի չի կծի:
Հանաքի կէտը կռիւ ա:

Հանաքը կըլնի չհանաք:

Հարսի ոռով, փեսին լառութեն ա անուս:

Հարսի հէրն ու մէյը դռան տակին ա թաղած:

Հարսին հէրանց տուն ասա, օտ բորիկ էլ կէթայ:

Հարսին թէ լեզու չունի, կեսրոջն իման:

Հարուստը որ շոր ա հաքնում, ասում են.— Բարով մաշես. ամա
աղքատին,— Էդ սրբիանա:

Հարստի սուտը, աղքատի ըղորթն ա:

Հասկացողին մին ասա, չհասկացողին հա կաց՝ հա ասա:

Հաստ ու բարակ մի գին ա, վայ բարակ մանողին:

Հարևանի շունն էլ լաւ պըտի ըլնի:

Հարևանիդ ուզա մի կով, որ Աստուծ քեզ տայ էրկու կով:

Հաց դնեմ, հասի, բան դնեմ փախի:

Հացը դրած, բանն անիծած:

Հացդ դիր հացիս կողքը, եա գլխից կեր, եա տակից:

Հացը ծնգանը, աչքը կնգանը:

Հացը հացարարին տուր, մինն էլ էլիլի:

Հացն էրէսիցը կուտեն:

Հաւը տանը կենայ, կուտն ուտի:

Հաւը քանի չաղանայ, ուին հուպ կը տայ:

Հաւը ջուր ա խմում, վերև ա մտիկ անում:

Հաւն իր կտին կեթայ:

Հաւն էրազում՝ կորկի ֆորումն ա ըլնում:

Հէնց որ էլը տուում ա, քաարբի ճակտին ա գիրնում:

Հեռուանց ելի աչքն ա հանում, մօզըկանց տիրոնչը:

Հին ջվալին քազայ տանգ:

Հըմի էկաթ պառուկ չտէր օղորմինչ:

Հիւանդին խնձոր հասցնող ա:

Հո կայ՝ դուս կը տանի, հո կայ ներս կըբերի:

Հօր փեռազը, տղին կնիգ ա:

Հօրս անունը տւող չը կայ, քոմմա էլ մօրս էն հարցնում:

Ձեռը ձեռ կը լուանայ, եղև էլ էրէս:

Ձեր եղը ձեզ ընի, մեր չորթանին մեք դիբնի:

Ձին ձիու մօտ որ կապես, եա խուն կը սաւրի, եա խառնաթը:

Ձուաձիդ սիրուն, քաւի պոչ էն պաչում:

Ձու ածող հաւը, կչկըչտն կըլնի:

Ձուի գողը, ձի էլ կը գողանայ:

Ձուկը գլխից կը ֆոսի:

Ձուկ բռնողի ուր կը թռչուի:

Ձուկը ծովում կը մենձանայ:

Ձուկը ծովում բազար չեն անի:

Ղարիբ շունը, պոչը ուր կը կոխի:

Ղանջըղը որ քոնթի գայ, քեօփազը Բաղդադու կը գայ:

Ղրդին ծախ, մախ դարդը չի՝ ծըլծկացնելու դարդն ա:

Ճանջը մի բան չի, ամա որ ընգնում ա թանի մէջ, մուռտա-
ռում ա:

Ճրագն իր տակը լիս չի տայ:

Ճուտամէր կատուն, գող կըլնի:

Մալին տէր, որդուն հէր:

Մալը գնա՝ տէրը հետը, որթին գնա՝ հէրը հետը:

Մանին մանած ա, պատէն կախած ա:

Մանին էս դունդումն ա, էն դունդումը չի:

Մամադն էլ դժողքը չէր էթում, ամա գլխին տալով տարան:

Մարթ որ մարթի խօսք բանի տեղ դնի, քար քարի վրայ չի
կենայ:

Մարթ որ մարթի դարս չիմանայ, կէս քչերին ժամ կասի:

Մարթ մարթի բաղ կը տայ, մարթ մարթի պտուղ չի տայ:

Մարթ շուն ընի, տան պուճուր չըլնի:

Մարթ կայ՝ տէրտէրն ա սիրում, մարթ կայ՝ տէրտէրագինը:

Մարթ կայ ոչ մարթանման, խօսկեքն էն մարթաորդան:

Մարթի աչք դուս գայ լաւ ա, քանց անըմը:

Մարթի շուաք, վարթի շուաք:

Մարթից որ էլ չըլնի, իչի գինը հազար քուման ա:

Մարթամիջի մարթա ըլնի, հազար քուման պարտքս ըլնի:

Մատի սագը մատանիքն ա:

Մեծի առած ա, պուճուրի լաած:

Մեղաւորին արքայութեն մի ա տուէ:
 Մեր դռանը լազ ա լգում, գնում ա ուրընի գռանն ա հայում:
 Մեր ըղունդը բաց անենք, միշին թքենք:
 Մեռլի տեղն էլ մի քիչ լէն պլտի ըլնի:
 Մեռլի ուին չամիչ կա՞յ, որ մեռնելիս սիրում են:
 Մի ձեռ ուր չես կարայ կղրես, պաշի գիր գլխիդ:
 Մի տնով չենք, մի հալով ենք:
 Մի սիրին էրկու մուկնաք չի ածի:
 Մի տուն մտնում էս, տան էութենը էն տան պուճուրից հարցրա:
 Մի հաց որ կէս էլաւ, էլ նոր չի սաղանայ:
 Մի ձեռը ծափ չի տայ:
 Մի ձեռով էրկու ձմերուկ չեն բռնի:
 Մին մի տայ, որ էրկու չուղի:
 Մընչանք հաստը բարակի, բարակի հոգին դուս կը դայ:
 Մկան չեռը ջաղացին Ֆայդայ ա:
 Մուկը ծակը չեր կարում մտնել. ցախաւելն էլ պոչից կապեցին:
 Մուկն էլ ա արանձ ուտում:
 Մուֆրա պատանի մեկնուղ ա:
 Մրիցն էլաւ, մրամանն ընգաւ:
 Մօդիկ հարկանը լաւ ա, քանց հեռու բարեկամը:
 Մօրը բաղդ, ախչկան քախս:
 Նալը մխին բանդ կըլնի:
 Նիսիա գինի խմողը, էրկու անքամ կը հարփի:
 Նօխուղն ըլել ա լաբաբու:
 Շաքաթը չուտ էկաւ, քան ուրբաթը:
 Շահն ի մամոնց, քաքն ի պապոնց:
 Շան հետնայ ընգերացի, փէզը ձեռիցդ մի քցի:
 Շան հետնայ ջուալ չեն մտնի:
 Շան կծածը, շան մազը կը սաղացնի:
 Շատ անողին տալ շապիկ, քիչ անողին ալ շապիկ:
 Շանից մազ պոկիլը խեւ ա:
 Շանը քարով կը տան, տիրոնչը խաքը կանէն:
 Շատ հաղ գիդամ, ամա ձէն չի գալիս:
 Շատ մի սիրիլ՝ ատիլ կայ, շատ մի ատիլ՝ սիրիլ կայ:
 Շատ գիտես, քիչ խօսայ:
 Շատ գիդուն էս, ամա չիմացածդ անգեղիցը հարցրա:
 Շատը շատին, իշի . . . աղքատին:
 Շէն անուն, աւեր քաղաք:
 Շիղակ խօսքը հանաքովեր կասեն:

Շիրվան գեւ թիչ կտր, մինն էլ գեամով անց կացաւ:
 Շորն ասեց.— Դու ինձ պըհա փողչամիչի, քեզ պըհեմ մարթամիջի:
 Շունը, շան թաթլիկ չի ծամի:
 Շունը, տէրը չի ճանանչում:
 Շունը հաչալով կը սատկի:
 Շունը գնըմ ա, ռադկէն ըռխին:
 Շունը գնաց դասաբխանէն՝ ոտ չը տարաւ, իր ոտը կդրեց:
 Շունն ինչ, բունն ինչ:
 Շունը պոչը պտըտում ա, ? բերնին ա դիմում:
 Շողոմքով գառը, էրկու մօր ա՝ ծծէ:

Ոչ կը խմեմ ձեր վաւկ, ոչ կը քշեմ ձեր հորիկ:
 Ոչ դու արի, ոչ նա բարի, էրկուսդ էլ մի արդի գարի:
 Ոչ հայի խունգ ա, ոչ թուրքի ուզարուգ:
 Ոչ սրփին մում խոստացի, ոչ էրեխուն բլիթ:
 Որ ատամդ որ ցաւում ա, հանա դէն քցի:
 Ո՞ր մատդ կդրէս, որ արին չը գայ:
 Ո՞րդի տանձ կայ, ընդի էլ պոչ կայ:
 Ո՞րդի հաց, ընդէ կաց:
 Ո՞րդի մթնի, ընդէ կռթնի:
 Ո՞րդի գինի, ընդի քնի:
 Ո՞րդի պիսիչ, ընդէ տմբամբիչ:
 Ոսկին էլ շատ պուճուր ա, ամա գինը թանգ ա:
 Ոտդ կարպետովդ մեղնի, որ չմըսես:
 Ոտին տեղ արեց, ոռին էլ ա տեղ անում:
 Ուզող ուզողի, բուրթը գողդի:
 Ուզում էս կաքաւաեցի՞ս էթաս, ակուսինն էլ էս մոռանում:
 Ուլը քթոցի տակ չի կենայ:
 Ուղղը քթալով էս ջրո՞ւմ:
 Ուղղը նիւել էս, կուզեկուզ էս ման գալիս:
 Ուղղի հաղը կարմնջի վրէն կը բռնի:
 Ուղղին ասին, չինքդ խի՞ ա ծռուր, ասեց.— Ընչա ա դուգ, որ չինքս դուգ ընի:

Ուղղին ասին աչքդ լիս, քեզ քոչագ ա էլէ, ասեց.— Ընչ աչքս լիսէք, որ իմ բռուր էլի իմ ռալագին ա:

Ուղղին ասին աչքդ լիս, թաքաւորը քեզ կանչել ա, ասեց.— Սա գիդամ, ես Կողբ աղի պըտի ըղբդի, ես Շարուր բընձի:

Ուղղը մեռնի, մեռնի, էլի կաչին մի իշաբեռն ա:

Ուրաքն իր կոթը չի տաչի:

Ուրաքը դբայ իրան կը տաչի:

Ուրբաթ օրուայ շորովն էմ, չաբաթ օրուայ փորովն էմ:
 Ուզողի մի էրեսը սե, չը տուղի էրկուսը:
 Ուրբշի հոր փորողը, ինքը կընդնի մէշը:
 Ո՛վ կը հաղայ՝ կշտափորիկ, ո՛վ չի հաղայ՝ կարմրառուիկ:
 Ով կը հաղայ, նա կը կաղայ:
 Ով չուստ, նա կուշտ:
 Որ սոխ չես կերէ, սխտորաֆօտ խի՜ ա գալի:

Ձալ օցից վախեցողը, չալ պարանից էլ կը վախենայ:
 Չամիչ հատիկ-հատիկ, մեղրիկ մատիկ-մատիկ:
 Չամիչն ինչքան էլ որ քաղցը ա, էլի պոչը ունի կպած ա:
 Չեկար հաւ. թռար թռա:
 Չը կերանք եղ ու մսէն, հեղտուեցանք տեռ ու թսէն:
 Չոր քաթը մարթու փեօի չի կպնի:
 Չուտողի մալը, ուտողին հալալ ա:

Պառաւը ք... եզնայ, դուռը դայիմ յեդ արա:

Պաս ուտեմ՝ պաս, թանով սըպմաս:

Պարաքը տալով, մեղքը լալով:

Պատը փուլ էկած օրը թոզ կըլնի:

Պղինձը վեր ընդաւ չըկողըվեց, ծէնը վեր էլաւ:

Պղինձը շատ որ ըլնի, իրա վրէն կը թափի:

Պուճուր մարթ, մենձ էրապ:

Պուտուկն ասեց տակա ոսկի ա, շերէփն ասեց.— Ե՛ս որդի եմ:

Պ... տուին, դաթէն էլ վրէն:

Պ... ք... Հերապետը, ջառմէն քաշի կարապետը:

Պասին կարօնօնի, ուտսին կարօնօնի՛լ:

Ջահելի փեօը իրան ա՛հ ա:

Ջաղաց էթողի գլուխը կալրոտի:

Ջաղացը կորցրել ա, չախչախին ա ման գալի:

Ջաղացիցը ես էմ գալի, դու ես ալրոտէ:

Ջուրը փոս տեղը գետլ կը տայ:

Ջուջուն ածի, պուփուն կրի:

Ջուրը ջաղացը տարել ա, վրէն խաբար չը կայ:

Ջուրն ընդնողը, անձրեկից չի վախենայ:

Ջուրն իր փոսը կը քթնի:

Ջրի կուժը, ջրի ճանփին կը կողրի:

Սալամի պէս գլուխդ տնգում էս, պոչդ ցցում, հէնց իմանում էս
 մարթ չի տենում:

Սարումը հնձողը, դաշտումն էլ կը հնձի:

Սար ու ձոր, տէրտէրի փոր:

Տարէնը մի գաղիկ, էն էլ նաւակատիկ:
 Սկըր սովորն ա կերէ, թանը մոլորն ա կերէ:
 Սէլը գոռալու տեղ, սէլւորն ա գոռում:
 Սէլը կտաւ աթարից, աթարը կտաւ պատից:
 Սէլը աթարիցն ա կպել, չի պոկուել:
 Սիպտակ ձին ցալն ինչ կտնի, սիրունը խալն ինչ կանի:
 Սիպտակ շունը, բամբակ ծախողին վնաս ա:
 Սիսեռակեր հարսն ա:

Սիրտս սուվիւրա չի, որ ամեն մարթի առաջ էլ բանամ:

Սովածը էրազում հաց կը տենայ, ծարաւը ջուր, աղիւրը ա:

գաղ կտաւ:

Սուտը ըղորթի դանդաղէն ա:

Սաին ունգ չունի:

Սոված փորին, ջուր տու ուրի:

Սկիցն էլ գատ ներկ չի ընի:

Սկին սապունն ինչ անի, խկին խրատն ինչ անի:

Վատ հարեանը, հարեանին հաջաթատէր ա արել:

Վայ խաբարը քեզ տեղ կը հասնի:

Վարը վարել էմ, վարակոթը դէն էմ քցէ,

Վարթն էլ շատ հոտով ա, ամա փշոտ ա:

Վարթը քաղայ, փուշը կրակայ:

Վերե թքեմ ճակատս ա. ներքե թքեմ միւրսեքս ա:

Վնասի կիսիցն էլ եդ դառնալը օքութ ա:

Վռազողին տղայ չի ընի:

Տալի չուշտակը յերթովն ընգաւ, հարսի սիրտը պատուեց:

Տամարն ու գետնայ արին կառնեն:

Տան տէրտէրին «օրհնեա տէր» չը կայ:

Տանձն ինձ, խնձորն ինձ, սերգելին էլ ձեռ տուողի հէրն ու մէրը:

Տանուտէրի շնաղն ո՞վ ա, գգիբը:

Տանձ էր հասաւ, թէ խնձոր էր՝ կարմրեց:

Տաշտին մեռնեմ, որ մի տաշտ էլ կողքին ա:

Տարդակ փէտին, շուն չի հաշայ:

Տարդակ ք... քամին տանի:

Տաք ջրին հով ջուր չեն տծի:

Տղատանը խաբար չը կայ, ախչկայ տանը անգըղզ:

Տէրտէր արա, գեղը քցայ, թէ չապրի, գետը քցայ:

Տէրտէրի տղէն, հանդումն ա թուրքացէ:

Տկլօր լաւին կատու օլագելն էր պակաս:

Տղէն տես, ախչիկը տուր:

Տնազը մարթ չի սպանի:
Տուեցի սարին, դիբաւ Գասալարին:
Տուեմ ես, գըմփեմ քեզ:

Յուան կոյը նախի անըմը բեղնամ ա արէ:
Յորենը ֆորիցը, որդին հօրիցը:

Փախի էն ջրից, որ ոչ կը խշա, ոչ կը ֆշա:

Փնրչ քեզ ասեմ, կուլա դո՛ւ լսի:

Փարչը թօլ էլաւ, կուժը քըթաւ:

Փէզը վերնէս, գող շուներ կիմանայ:

Փեռազատիրոնչ կնիգը մընչանք չէս օր ա սոված կացէ, ան-
փեռազատիրոնչը մընչանք իրիգոնը:

Փէսի շլաք, փշի շվաք:

Փէսի փիսն՝ էրէսին ա:

Փլաւ ուտողի ք...ը կեր, ք... կերի փլաւը մի ուտի:

Փիս խօսքը թեզ տեղ կը հասնի:

Փիս օրը կը լաւանայ, փիս մարթը չի լաւանայ:

Փուշը փուշ ա, մաքիճաթը անուշ ա:

Փորցած թանը լաւ ա, քանց անփորց մածոնը:

Քանի ակուաւ էր էլէ, ըսկի՛ ըտէնց քաք չէր կերէ:

Քանց ատամը քաղցը բան չը կայ, ամա ցաւելիս հանում դէն
էն քցում:

Քանց ջուր կը գնայ, քանց աւաղ կը մնայ:

Քաշալը որ դեղ անող ընի, իրա գլխին կանի:

Քաւորին դրին տանուտէր, առաչ սանամօրը դրեց իշին:

Քեասըբի էրէսն իրան խոով:

Քեասըբի էրէսը սե ա:

Քեասըբի մի եզը էրկու չի ընի:

Քեզ հըմար քուն էս քնում, ուրըչի հըմար էրազ էս տենում:

Քու լուին հազար լիդր եղ ունի:

Քունը քուն կը բերի:

Քուրդն իր թանին թթու չի առի:

Քօն եզը խիալով ման կը գայ:

Քօնի ինչ վեզն ա, թէ մուսը թանգ ա:

Օխտը քենակալ մի ճանփով գնում ին, ասեցին.—Մի մարթ էլ
լը կայ որ հետնէն խօսանք:

Օրթումը էրկու բերնանի թուր ա, կը կդրի:

Օրը գնացած, խաթէն մնացած:

Օցը որ օց ա, մարթի ջուր խմելիս չի տայ:

Օցի ազալը որ գայ, կը գայ ճանփի մէջտեղին կը պարկի:

Օցի ինաղը խլեգիցն ա հանում:

Օցի կծածը կը սաղանայ, լեզուի կծածը չի սաղանայ:

Ֆորթը պհրից կապած ա:

15.

Խոյեցեաց Հայրադ գիւղի բարբառով *)

Ամռվան փիւշ ի, ծմռվան նիւշ ի
 Ամօթ տսել՝—իմ ոռէն լլիւր ի, ընձի լողց ի ուսուցելի
 Անճարն ի կերի պոնջորտ:
 Աշխրքի սուշը էրկէն ի:
 Աչքէն խանէց, տրէց բարբառ:
 Անձուսլ օրա խաւերին ճիւր տըւող շատ կըլէն:
 Ասուած սարը տըսնալի, ծիւն ի տնէլի:
 Ասաու պախած կեռուտ, կելլը չի ուտի:
 Ան ծի առնել, մսուրք ի կապելի:
 Առչին զուռցացողա, չի՛նտ իտինինտ ինչ կասի:
 Ասողին լսող տկի:
 Ասուած էա ծէռտ էն ծէռին մուխտաջ չունի:
 Աւել քրքեռն խօ փոր չի ծակի:

Բողալ բողալին տիւս, Բողալն սւտի էրկու ծ. . .
 Բողղող էլ շատ խիւրմտ կայ, ընձիկ ինչ:
 Բժեռտ աչքերին դուրբան էմ լլէլի, որ խացիս վրտն կարաք տնի:

Դեչիւ կլօխը որ քէոր տվէց, կէթտ չօբանի դողեռնագին
 զայնմոք կը տայ:

Դուռն չումչոյով էա ճրէլի:
 Դիւզ զուրցացողի կլօխա ծայ կըլի:

Եարան տիւսչն ի ցաւ տալի:
 Եա ճողչի ոռն էմ լղէլի, տիւ էլ ճողչըպանին:

Զատամանց էլի աչքն ի խանելի, մոտամանց տիւռնչու:

Էրկու ծռին մէ խէլոցի կայ:
 Էրկուսն էլ մի սանդուի կտաւ էն:

Ըմմէն մարթ էլ իւր խօր տղան ի:
 Ընչունք աղնջիկեռ, մատաղը կէթտ:
 Ընչունք չը պխտորլի, չի զուլալնայ:
 Ընչի լօղնամ, որ ընչի տողնամ:

*) Գրի է առնուած զրաշար Յարութիւն Աւչեանի հաւաքածուներէն:

Թագին շիւն չի՛:

Թագին զիւնն ի, լաւստրակին ընձիկ ի շանց տալի՛:

Թոսիբը թալիր էն շանա, շիւնը չի կերի:

Թռանայ տնողի կլօսը կիկեռ:

Ժամէն ես էմ իկեալի, «օղորմի Ասուածա» տիւ ես ասելի:

Իրէս մի տո՛ւ, աստառ էլ չիւզի:

Լաւ էրազ ի, ոյետր կատարուի:

Լեօս կաթելին, կընոցիւր էր էշ պախելի:

Խարսու ոռով փէսային լաւութեն ի տնելի:

Խաստը պորտկ մէ կին ի, վայ պորտկ մանողին:

Խացը որ կտուլաւ, էլ ստէփ չի սաղանայ:

Խաւը որ խաւ ի, ճիւր խմելին վերե Աստուն ի բշկալի:

Խէր սեօյլումազն ի:

Խին տորմոնը քամուն չեն տայ:

Խուփը գըլգորվաւ, ոլտուկը՝ գըդաւ:

Մանդա տեղդ մի՛ թիթեցիւ:

Մեռը ծեռ կը լըլոյ, ստէփ ծեռո իրէս կը լըլոյ:

Միւկ պունդի ոռը կը տռճըվի:

Միւկը ծոփի մէջը կը ճեօշտնայ:

Մուռը մէ քար թալէց ճըլխորո, խոգոր խելացի ժողնըվան,
չիցան խանելու:

Կաշառքա մութ տեղն էլ լեօս ի տվի:

Կարմիր կովա իւր խրխիէն տիւս չիկեռ:

Կեառը կելին պախ տվին:

Կեղէն ըլի, տեղէն չըլի:

Կըսիւրս մեռաւ, տեղս լէնցաւ:

Կրակի մոտո չախմախ չեն գորկի:

Հալալ մարթու խացա չի կտուլի:

Համ նալին ի տալի, համ մէխին:

Ղարդոյի ծէնո որ Ասուած լսի, վաթըւորի ճառայ՝ չեօքին
ձիւն կիկեռոյ:

Ճեօշի ասած, փստըկայ լսած:

Ճիւրն ինդեօղայ. անձոռվէն չի վռնէնայ:

Ճըաքն իւր տակը լեօս չի տայ:

Մոցին էտ կենքեռ ծէն կը տայ, էն կենքեռ ծէն չի տայ:

Մարթ շիւն ըլի, տան փստիկ չըլի:

Մէ փորին էրկու մեցտոք չի իւզի:

Մէ ծեռ որ չը կտուլի, պայհնի տնի ճատկին:

Մէ ծեռո չափ չի գորկի:
 Մէ ծեռով էրկու ծմերիւկ չի պոնըւի:
 Մուկն իւր պոնի մէջո տսլան կըլի:
 Մույն էլի կարկատ ուտելի հմ:

Նը ոչ կը խմեմ ծեր վըռիկ, նը ոչ կը քչեմ ծեր խուրիկ:
 Նօխուդը կընոց, ըլաւ լոբլոբիւ:

Շանը բեռնի որ քար թուէս, կը խաչի:
 Շանը քար էն թուէլի, տիւոնչո խոթք էն տնէլի:
 Շատ խաղ գիւնոմ, ամա ծէնս չիկեալի:
 Շատը շատին, էջիւ կ. . . ախկտին:
 Շէն տուն, նոխարի խաց:
 Շիւնը կապին խացի տաշտէն:
 Շնորքի վաբ, գորքի եօխ:

Որ մէ կեղ կայնի, կերան կը կոռի:

Զոր ք. . . մարթու փեօէ չի կալնի:

Զօլախ էշով քարվան ի էթալի:

Պորէկամբ խետը կերը խում տրտ, առատուր մ' տրտ:

Պերնով իւզուկ, ոռով կերուկ:

Պողկը քեռնի նօսը ըլի, կլօխա պէտպէտ կը քըցի:

Սանդ ծեծողին դըխկ տնէլի:

Սև շանա դորտդուտ ի կանչէլի:

Սևն տրիւ էնք նեստ, սվտոյն տրիւէնք տիւտոյ:

Տոշտի պիպուն կուող էս:

Տան աէրտէրին «օրչնեա տէր» չը կայ:

Տաշկուն ընչիւկ մէ լաւ չը թփէս, խոցոխտ չի տուենայ:

Տղան պաճառ, մէլն օրօրճար:

Տռան ոռին քօբայ կըլի:

Փախի՝—Գօռէն. Գեռչալէն, Թօփալէն, կապուտ աչկէն, որ
 տասմէն խաքայ կիկեալ:

Փէտը որ վերցէս, կեռղ չիւնը կը խասկընայ:

Գեռչալը տեղ տնող ըլի, հոգր իւր կլխին կանի էլի:

Օսօրուան պոնտ, չէն թոնի կանօխուանայ:



I6.

ԼՕՆՈՒՅՈՒՅ ԲԱՐԲԱՆՈՒՎ *).

Աղուաւի կերածը բահրի տեղ էս հաշուում:

Անճարն ա կերել բանջարը:

Ածող հաւը կը կրկըջայ:

Ականջներդ բամբակ էս կոխել:

Ամակդ էրուսաղէմ:

Ամակդ իշի քամակ:

Ամանը կը շինեն, ունկը կը կպցնեն:

Ամառ, ձմեռ մէկ խելք ինչ անի:

Ամեն բանի բարւակը կը կտորի, մարդի հաստը:

Անձրիից փախայ, կարկուտի ռաստ էկայ:

Անտէր մնայ լեզուն, ինչպէս կը բլբլայ:

Աշխարհը դմակ ա, տղէն դանակ ա:

Աչքդ առաջդ ա տեսնըմ, քամակդ էլ տես, է:

Առաջնորդը ես էմ, բակլէն խաշած կը ցանեմ:

Ասողին էլ լսող պտի:

Աստուածածին արն, տուն մտի, Սուրբ խաչն արն, սնտուն
մտի:

Աստուած թէ տայ, էրկու ձեռքով կտայ:

Աստուած քօս տայ, ըզունդ չիտայ:

Ատամ փորելով մարդ չի կշտանար:

Աւազի վրէն տուն չեն չինիլ:

Բարեկամիդ հետ կեր ու խում արն, առուտուր մի անիլ:

Բերան չի, տաճար ա:

Բօւ չիվալ, դարտակ չանախ, հն չափէ, հն չափէ:

Գդակը մեծ, տակը դարտակ:

Գէլը իրա հոգեհանը գիտի:

Գէշ ձին զամբին կաւելացնի, լաւ ձին գարին:

Դիժը գնաց հարսանիկ. առաց. — էս մեր տանից լաւն ա:

*) Ասած է Գեղամ վարդապետ Բարաջանեան, որ բնիկ ԼՕՆԵՅԻ է եւ հետզհետէ խօսակցութեան յարմար տեղը իւրաքանչիւր առած զործածած է:

Գիժը մի կենճի (խիճ) դցեց ծովը, հարիւր իմաստուն չկարացին հանել:

Գիւլի անունն ա բեղնամ, չաղկալները մարդու փոր դուս կտան:
Գիւլին ասին.— Ե՞րես գնում սարը.— Ես էլ ելի հետ էմ, ասաց:
Գիւլից օամազլուդ չեն վեր առնիլ:
Գլուխ էկած բանը չեն քանդիլ:

Դարմանը քունը չի, մարագը խոճ քունն ա:
Դեռ ոտիդ տեղ չես արել, ուկիդ էս տեղ անում:
Դերձիկին ասեցին՝ բռնիւր, ասեղը կոխեց եախէն ու դնաց:
Դու ինձ պահիր բողջի միջին, ես քեզ պահեմ մարդու միջին:
Դու քու զուռնէն էս ածում:

Եզան փորը խոտը չի ծակիլ:

Եզը ինձ համար կալ չի անում, ուրիշի համար պատարագ ա անում:

Եկեղեցու դուռը բաց ա, շանն էլ աբուռ պալի:

Եղը թանգ ա, ճմբուռը էժմն:

Ես էս տեղ էմ, ասեց սատանէն, ճրմա իմ մատը եզան պոչի տակն ա:

Ե՛ս իմ դօլը չածեմ, թէ քու էլը կը խրտնիլ:

Էգուցուայ օրին ձին ա էկել:

Էնքան կերար, աչքդ բանօքի դառաւ:

Էլը իշին մօտ կապէս, ես խույը կտորվի, ես խաւսիլաթը:

Էշի զատիկը կանանչի դուս գալն ա:

Էս խմորը ջուր շատ կը վերցնի:

Էրեխէն մնանայ, մէրը կշտանայ:

Էրեխէն չեւած, կը կարդայ:

Էրեսին թքեցին, ասեց.— Մայիսի անձրի ա:

Էրկու ախոռանի ա:

Էրկու էրեսանի սաջի հաց էս դառել:

Էրկու ձմերուկ մէկ ձեռքով չի բռնուիլ:

Էւելի քիւէն մարդու փոր չի ծակիլ:

Թէ լաւ մարդ էս, գաթէն փէշըմդ պաս պահի:

Թէ որ սխտոր չես կերել, բերնիցդ ընչի՞ ա հոտ դալի:

Ժամը պապինս պալի, հարսանիքը եղբօրս ...:

Ժամիցը ես էմ դալի «օղբորմի Աստուածը» դժւ էս ասում:

Ինձ չես հաւատում, իշի ղռոցին էս հաւատում:

Իմաստուն աղուէսը չորս ոտով կընկնի խափանքի մէջը՝
 Ինչպէս ա, լուսնումուծը գիտես, Լեզարակամուտը չը գիտես,
 Իշին ասին.— ՄարիՅաթդ ինչ ա. պոչը տնկեց ու զոաց:

Լիսը վեր գալիս իշանն էս գնացել:

Խաղ շատ գիտեմ, համա ձէն չունեմ:
 Խեղդ գալ ու գէթ ա:
 Խեղքից թեթե, ոտից (չափուկ) եզին:
 Խնամու նազը տանիլ չի ըլի:
 Խովիդ սուր ա, ամա հանդը բաժանովի ա:

Մանտր տեղդ թեթեացնիլ մի:
 Մառէն ծառատակը աչքիդ էդպէս կերևայ:

Կամդ կով ա լծած:
 Կակալը զնկակատան գլխին չի կաղնիլ:
 Կաշառքը մուծը տեղը լիս կայ:
 Կատուի վազը մինչև մարագն ա:
 Կարագը հալած էնք շինիլ:
 Կարասի մէջը ինչ ձէն տաս, էն կը լսես:
 Կը մեռնեմ, մեղայ Աստըծոյ չեմ ասիլ:
 Կովը շլակիդ ման էս գալի:
 Կոտրած ձուն, կտրած հացը, չի ռաղանայ:
 Կուժ ու կուլէն իմ գլխիս կը կոտրես:
 Կուժ, քեզ կասեմ, կուլայ, դու լիլ:
 Կռան տակին ձմերուկ ա դրել:

Հախիջանը գիտի թէ իրան ալը գլխը թօլ կանի:
 Համ առջիցը վախենամ, համ քաքիցը:
 Հօ-հօ կայ, տուն կը բերի, հօ-հօ կայ, դուս կունի:

Ձագամեր կատուն գող կըլի:
 Ձեռիս թքե, էրեսիդ քսեմ:
 Ձիու ոտը ջրումը՝ չըւշըւացնիլը ինչ կանի:

Ղասաղխանիցը շունը իրա ոտը կտրեց:
 Ղարաբաղու հողումը քսան գազ կը թռչէր,— Ահա, էս գազը,
 էս էլ հողը, արի, տաս գազ թռի:

Ղօշը մի խառնէք ոչխարին, գարունքը գառը չեմ գնալ:

Մարդս սրտովս չի, տէքորս անունը ինչ գիտեմ:

Մեռելը քանի ժամ տաս, քամի կանի:

Մէկ ձեռը ծափ չի տալ:

Միս ուտող դօի կտուցը կեռ կըլի:

Մոկն էլ աղանձ կուտի:

Մուկը իր ծակը չէր կտրում մտնի, ցախաւելն էլ պոչիցը կապեցին:

Մուկն իրա ծակի դուռը ղոչախ կըլի:

—Շէն կենաս, Մղղըսի.—Ինչով իմացար ես մղղըսի էմ.—Քուտուած արսիցը:

Շնացը նաւազլիսն էս առնում:

Շանից մազ պոկելը օգութ ա:

Շանը հետ ախպէրացիք, փէսը ձեռիցդ վէր մի դցիլ:

Շները կռուեցին, աղքատի բանը յաջողաց:

Շունը շան թանթլիկը չի կծիլ:

Շունը շանից, էրկուսը մի տանից:

Շունը ջուրը անցնելիս՝ մինչև ոռին չհասնի, լող չի տալ:

Ուզեց կաքաւաւերի՞ս գնալ, ագռաւինն էլ կտրցրեց:

Ուղտը ինչքան էլ սատկի, կաշին մի բեռը կըլի:

Ուղտը իրան բորիկ շատ ա տեսել:

Ուրագը դէպի իրան կը տալի:

Չանցնիդ առջի եղով ա մերսած (չփուած):

Չոր քարի վրայ էլ որ գնայ, կը կընանչի:

Պղինձը գետին ընկաւ, չի կտորուեց, հրմա ձէնը դուռ ընկաւ:

Պղինձը որ ըլնի, իր տակը կը հանգցնի:

Ջուրը իր ճամբէն կը գթնի:

Ջուրը ջաղացի գլուխն առել ա:

Սամըրի էրածը մածնին կը փչի:

Սատանի ձիուն վեր էս էլի:

Սերը սալորն ա կերել, ծուածեղը կնքաւորը:

Սեին սապօնը ինչ կանի, խեին խրատը ինչ:

Սէրը աթարիցն ա կպել:

Վայ էն կալի տիրոջ, որ առաջի կամը կով ա լծած:

Տանստանով լաց կըլենք:

Տաք ջուրը բերանումդ համ չի տալի:

Տէրտէր արա, գեղը գցի, թէ ասլրի ոչ, ջուրը գցի:
Տվուց կողին, ընկաւ հողին:

Յաւը նրան տուր, ով որ դեղը գլտի:
Յորեն հաց չունի, ցորեն լեզու էլ չունիս:

Փէտը էրկու ծէր ունի, մէկ ծէրն էլ քեզ կը դիպչի:
Փորդ վեց - վեց ա անում:
Փուշը մէկ - մէկ կը հանեն:

Քահանայ, փիլօսո՞ղ վրէժ մընաւայ:
Քաւնի մեռելն էք մի պատանում դնում.— Մեռելը գիգի:
Քաչալը գեղ դիտենայ, իր գլխին կանի:
Քօռի թնչ վեհն ա թէ մամը թանդ ա:
Քու տէրն էլ պտի ասի, ես էլ նախըրումը էչ ունեմ:

Օխտը իչի մսուրք ա ընկել:
Օձը մըմախտոից կը փախչի:
Օձի սկն էլ անիծուի, սպիտակն էլ:
Օսալ կովի պէս կաթը տալիս էս, ու քացի տալի վէր ածում:



I7.

Կուլտպ գիւղացիներէն առնուած *).

Աղուէսը մարագը ձագ խանց:— Էնի մեր թագու հիգութենիցն ա:
Աղջիկն օր կայ, տան ծաղիկն ա,
Աշխար դմակ ա, խելք պտի բլի օր ուտայ:
Առուն թռիւր, նոր քե դովամ:
Աստուածածին արա, բագը մտիւր, Սուրբ խան արա, ծակը
մտիւր, Մուղնուխտն արա, դուռը յետ արա:
Արե, էշը տլից խանայ:
Արջն ու գովրնս:
Արա խախուս, միանայ կարկուտ:
Բամբակ ա ընկե դգողի ձեռ:
Գիշերը դողութեն ա անըմ, ցերեկը «տէր օղորմեայ:
Գլուխդ քաղաք թըջէ, էստեղ ածիլայ:
Գինու էնքան մայիլ ա, քացախի էլ դայիլ ա:
— Դուռ բաց, դամ ներս, ասաց հարսը.— Արճիճ եմ ես, ասաց
կեսուր:
— Դուռ բաց, դամ ներս, արճիճ քամեմ, դու տես, ասաց հարսը:
Նկեղեցուն չանք մոմ չտաս, քու մուրազը չտար:
Նա ուրիշ տեղից կը գողնամ. դու քու տան բարաբեաթն ասա,
Սրգմանդ հաւատում իմ, յըմա, ճիտու պոչ կեր կերկայ:
Էս գինի ա, թան չէ, էմեն մարդի բան չէ:
Էնկրանից ջուր չտաքնար:

*) Գայլոտոյ ըմակի հիւսիսն կայ $\frac{1}{4}$ ժամ հեռուն Աքասիօլ հայ
գիւղն. $\frac{1}{4}$ ժամ ասկէ ցած Կուլաք հայ գիւղն ու Մոլլա - դամէր. որ
իրար խառնուելու վրայ են. Այս երեք գիւղերու բնակիչները Պայադիտէն
ու Ծաղկոտն զաւուռէն զաղթած են մի դար առաջ եւ ապա հետզհետէ
բազմացած:

Ասոնք պահած են հայրենական աւանդութիւնները ու զրոյցները:
Իգդիրի դաշտին, որ Սահաթափոս կասուի, որոյ բնակիչներ շատ
քիչ ազդած են կուլապցոց լեզուին ու սովորութեան վրայ. Ձմեռը երկար
է, տաք եւ յատուկ սենեակներ կը հաւաքուին. զրոյցներով ժամանակ
կանցնեն. Մի ծմեռ այս գիւղը մնալով անթիւ զրոյցներ լսած եմ եւ զրի
առած եմ մի փոքր մասը, որ այլ եւ այլ կարգերու բաժանուած լինելով
իեննց յարմար տեղը կը զետեղեն:

Եւ կը քոթին, պոչից կը խռովին:

Թէ ունիս, աշխարհ կը պտոտես:

Թէ չունիս, փողոցը (փողինոց) պտի շրջիս:

Իշու բեռն օր ընկաւ, տէր դուաքով կըլլի, քընց էշ:

Լայ էրին, լայ որբուհիին, օխտը իրկայ տէրն էլ լաց ըլի:

Լուից եղ ա խանճմ:

Լուծն էրկու քարաձէն թալեցին իմ վզին:

Խմելուս հայհայ, հաշումը վայվայ:

Ծառն ընկաւ, ճղիցը կը կանանչի:

Կը մանիս ջրի պղլոր (բզտիկ):

Կիրակմուտ ամպեց, շաքաթ դլխէ գլուխ գնաց:

Կօտքը կայ, գօրքը չկայ:

Հագան խասերը, կերան պասերը: դարտակ մնաց ժամի թա-
սերը:

Հալխին ճրագ ա, ընձի մրագ կալ ա:

Համ Անու կորկոտէն, համ տնու ցաւարէն:

Համատան գացի, եօթ կորի կը թռնէնք.—Համատան հեռու,

կորին մօտ, արի, թռի:

Մեղանից նեղը կայ, սեղան դրե, աչքը գինու ճանքէն ա:

Մեծ մարդ կարմունջ էղնի, վերեից մի անցնիր:

Մէկ ձմեռ խարսնիք էն էրեր սոխ ու սխտոր խըդ իրարու:

Մէկ տարի գառ էլի, տաս տարի գառ կեր:

Մնարլիկ իշուն՝ բեռ մի ապրշում:

Յորդումը էրկու բերնէն սուր ա:

Շանը տէր, որդուն խէր:

Ոչ կուտեմ ըստոնց վռիկ, օչ կը քչեմ ընդոնց հորիք:

Ոտը ոռին կտայ:

Ուստի մի կուանը կաժայ հագար թուման:

Ուրբաթ ամպեց, շաքաթ պարզեց:

Ձթորկին աղուէս ուր ծկի դուռ դռնըկայ:

Սուտ առան մարդը բնորդ չունի:

Տան խաց, մարդուն շոր:

Տնիցդ օր էրթաս, նոր տանդ դադրը կիմանաս:

Տունը չկայ թան ու փոշի, գլուխը կապեր ա կարմիր փուշի:

Փէտը կաքուին չառաւ, կաքաւը փետին առաւ:

Փէտը փուտ, յորդումը սուտ:

I 8.

Պարսկաստանի բաւրախօս հայ զիւղացիներէն առնուած,
բարգմանած հայերէն.

Այն որ աղջիկը չպատժէր, մի օր ծնկներուն պիտի հարուածէ.
Իսկ այն որ որդին չպատժէր, զլիւին պիտի հարուածէ:

Անցնողին անցեալ կասին:

Աստուած տուած չէ, Մահմէդ ինչ անէ:

Բարտին բարձր է, բայց միւր չունի:

Դոռմը մըգեղէնի կարգ անցեր է:

Դժբաղդութիւնը մարդուս վրայ բերողը իր գաւազն է:

Էշը երբ ցաւ զգայ, ձիէն աւելի քայլք կ'ունենայ:

Իմ անուն քո վերան դնեմ, քեզ խորովեմ թողեմ:

Ինչ բան մարդու ցանկութեան դժուար կը թուի, այն բարիք է:

Ի պանդխտութեան գործով զբաղուած, յայրութեան լուր նըս-
տած, ուրեմն երբ պիտի լինի քո Աստուածաշնորհութիւնը:

Լեւներու դագաթը ձմեռ, կտրիճի զլուսը խոնարհ:

Կարիճի խայթիլը ախա մէ և ոչ թէ թշնամութիւն:

Կոյրը չուկան չգնաց, չուկան առանց կոյրի մնաց:

Կոյրին մի գառ բաժին, ուրեմն առողջներուն:

Հաւին չգալիս ևս, նա իր զլիւին չող կտայ:

Հիւանդին մեռնիլը անկէ յայտնի է, անկողինը կը թողէ, բար-
ձի վրայ կը պղծէ:

Մատաղ լինիմ. համըլիչ, քեզ. ոչ ոք կասկած չունի մեզ:

Մարագ (ի) Մարտին: պատրաստութիւն ազրայիլին. համբարձ-
ման երեք խուրձ խուտ:

Շան ևս լաւ ցեղը կորոնեն:

Շունը եկեղեցի մտնէ աւելի լաւ է, քան ոչխարը:

Շունը կը հաջէ, կարավանը կանցնի:

Որ նման նմանին չգտնէ, օրը սուգ կանցնէ:

Սարերու վերայ ձիւն եկաւ. վայ դեղնագոյնին, հացը սեղանէն
պակասաւ, վայ սեւագոյնին:

Սուտը յատակ չունի՝ կեցցէ յարմարեցնողը:

Տանջանքի վերջը վայելչութիւն է:

Յաւիս ցաւակից՝ սւրախութեանս ուրախակից չես. այլ ևս ինչ
օրիս պէտք ես:

Գեղ անասուն ասացի, դու քեզ չան նմանեցնելու, գառան
նմանեցուր:

ԻԹ.

Օճականի բարբառով.

Ախշարքը դմակ ա, միջի մարդը մկրատ:

Ախշարքը դմակ ա, տղէն դանակ, սը տե հասնի, ըն տի կտրի,

ճրնտի ուտի:

Ախշարքը խելոքութունն ա կերել:

Ախշարքի քաքը լալկում եմ, գիտամ դու ուտում ես:

Ախշարքս չողոմքութունն ա կերել:

Ամեն ամպելուն կարկուտ չի գալ:

Ամեն մարդ իրա մեռլի դարդն ա լաց ընում:

Ամեն մարդիցը մի մի մադ պոկեա, քսին կըլնի մի միրուք:

Ամեն մարդիցը մադ պոկելը խեռ ա:

Ամեն մի խօսքդ օխում դանակ ըլնի ինձ:

Ամպ օրը փնթի կնկանը գիշերով կերկայ:

Այ ամպ, գոռալ մի, միթամ բան կայ քու միջին:

Անգիտունի հետ փլաւ ուտիլ մի:

Անհասկանելի մարդի հետ գլուխ չունեմ:

Ան ձի մտուր կը կապեն:

Աչըղի հաղը հատնի, նեյնիմ, նեյնիմ կընկնի:

Աչքդ մենակ քեզ ա լիս տալի:

Աչքը ինչքան բանձրանայ, ունքիցը վերե չի բանձրանալ:

Առչը իրա ահլիցը կը գոռայ:

Առսրգ մարդը Աստըծու տակին շատ կապրի, մտածողը քիչ:

Աստուած ուրանող Աշտաբակցիք:

Աստուած հարպտի դհիցն ա:

Աստուծոյ մի ֆստը գալիս ա միջին:

Բանդի քանդածը Աստուած չի կարայ չինի:

Բզի գլխին դմսուկով տալ չիլնիլ:

Բօզ ձին երիտ կըլնի, ետը օխուտ կըլնի:

Գեղը նի կը մտնես, էրեխիցը բան իմացի:

Գեղ կայնի, գերան կը կտրի:

Գթալ, գթալ քօփ արի, շերտի - շերտի դուս տուի:

Գիժը քար քցեց ծովը, տենանք մենց պտի հանին:

Գիտուն մարդը քե լացացնի լաւ ա, քանց անգէտը ծիծաղացնի:

Գլուխդ քանն էս տուե, էրեսդ պատը:
Գնացիր նախդի աղաքը, քու էլը նի էլար:
Գողը որ տնից էլաւ, եզը էրդիքով դուս կը քաշի:
Գողիդ նստեմ, միրուքդ պահեմ:
Գրողս էի ուզում, դրան տեսնել չեմ ուզում:

Դու էլի մենծ ախպէր, ես պուճուր:
Դունչը էնքան բանձր ա, մզրախի քաքը դնչին չի հասնում:
Դամբուլ մին կեր, ծիրան էրկու, քանի փորդ տանի:
Դու էս աշխարհէն չես:
Դու ինչ էս, ինձ հետ ոտդ մեկնում էս:
Դժմը փչում էն, դէն էս էթում:

Էլոց ձեռքով փուշ չես բռնիլ:
Էն տունը մենծ չընի, մի ֆօքուկ դնրմ էն տեղ:
Էլը նի ըլիլը մի ալիք ա, վեր դալը էրկու:
Էրկու ջուր մի քաղցու, էն էլ տուեցինք Կարբեցու:

Թէ դու աղուէս էս, ես էլ պոչն եմ:

Ինչ փրթես, էն կը խրթես:

Խորովածաֆոռի զնացի, իմացայ էչ էն խանձրմ:
Խօսքով էլայ, ցելը ջուրը տարաւ:

Կատուին հաղ ա, մկան մահ ա:

Կատուի դունչը չի հասաւ մսին, մուլօ - մուլօ, արեց:

Հալալը մազ է դառել, չի կտրուել, հաւամը գերան ա դառել
կտրուել:

Հասկանող էս մին ասա, չի հասկանող էս, էրկու:

Հարեանի հաւը. հարեանի աչքին չաղ կերեայ:

Հարեանին հարսը հարեանին շատ սիրուն կերեայ:

Հացը հացարարին տուր, մինն էլ աւել տուր:

Հին ոխը մարդի մտիցը չէթալ:

Հում կաթնակերին ինքիպաք չկայ:

Ձին առել չես, քեզ մուռք էս չինում:

Ղուլօխուկիցդ շատ վերե էս թըչում:

Մալն էթայ, տէրը հետը, որդին էթայ հէրը հետը:

Մարդամիջին մարդ ըլնի, օխտը թուման պարտք ըլնի:

Մարդ մարդի բաղ կը տայ, մտըդ մարդի պտուղ չի տայ,
Մի բան իմանում չես, թեզուց բոբկանում էս:

Շողոմքով դառը օխտը մէր ա ծծել:

Ով ալարի, ոչ դալարի:

Ոտդ քու կարպետին մեկնի:

Ուզում ա կաքուի երիտ էթալ, ագուսինն էլ մտքիցը քցում ա:

Պառուի տողորմէն կգաս:

Պուճուրը մենծին լսէ ոչ, ոտը քարի կգայ:

Տղէն որ լաւ ըլնի, իրա հօր տունը կը շինի:

Փնթի կնկայ օրը ամալ կերեսայ:

Փորձանքը մի սնգամ կը պատահի:

Քաքը փորումը եռում ա, հենց իմանում էս ճրագն ա:

Քաքլան էրեխու նման տազ ես արել:

Քեզ լացացնողի կշտին կաց:

Քու հօր համար ժամ չես անում, խլիի համար պատարագ էս անում:

Քու ցերեկուայ ման էկածը, գշերում էմ ման էկե:

Օձի փուշը լակլակը կը մարսի:

Օրը գնացած, խաթէն մնացած:

Փօր քանդողը, ֆօրը կընկնի:



20.

Ակնայ բարբառով *)

Ածան հաւը կարբըճան կուլի:

Աղուէս կայ օր գլուխ կու կըյրէ, գալի անիւն նէ էլեր:

Աղուորը սիրուն է, գէշը տիրուն:

Աղջիկ հօրոքրոջ կուճանի, տղան քնուուն:

Ամենն ալ մարս կու հարցնեն, հարս հարցնող չիկայ:

Ամեն էղաւ, ադ էր պակաս:

Ամեն կնիկ կնիյ ուլի, օխամուրն ալ էրիկ կուլի:

Ամեն մարդ կրակը իր բաղըջի տակ կու քաշէ:

Ամեն օր գետը գիտուտի չի բերեր:

Ամուռան փուշ, ձմուռան նուշ:

Անհախ կուլի, անհաց չի ուլիր:

Անպած օրը հաւուն ջուր չեն խտար:

Աստուած հացը մէկին կուտայ, իսեկը մէկալին:

Աստուած մէկ աչքը մէկալին միջթոճ չընէ:

Աստուած տուեր ու չի խնայեր:

Աստուծոյ պահած դառը գալը չի ուտէր:

Արևը Արեւգակ էլաւ:

Բեր հազարդ հեծնենք, դնէ հազար բերան:

Բերնովս ուզեմ, օրով ուտեմ:

Գիժուն գործ գիր, հետն էլերայ:

Գողը գողէն գողացաւ, Աստուած տեսաւ, զարմացաւ:

Գողին սիրտը դող կուլի:

Դանակը իր կոթը չի տաչեր

Դմակ է ու դանակը մէջն է:

Դմակը մեծ է, իր օռը կու ծածկէ:

Դու դրացինիդ կով մը ուզէ, Աստուած քեզի էրկուք կու տայ:

Դրացինիդ վատ մի ըսեր, եա էրդիքդ է, եա դուռդ:

Նզը կը վերցնեն, տակը հորթ կու փնտռեն:

Նս աղա, դուն աղա, ջաղացքը սկ աղա:

*) Ասած է Մարիցայ Մաքսուդեան, զրի առած է Միսաք Տէր Ղազարեան:

Եւ իշին քով կապես, ետ առքը կառնի, ետ փառքը
 Եւ իշին քով կապեն, ետ արուցը կառնէ, ետ բարուցը
 Երկու դարփուզ մէկ դօլթուղը չի օեղմէր:

Ըխտին մօմ, գիժուն բան մի խօստանար:

Թուխ աչքը մօրուց պիտի, դեղ դրածը քեզ կաւրի:
 Թքենք, անձրիս կուգայ:

Խենթը խրատը ինչ ընէ, սկը սապօնը ինչ ընէ:

Խօտը խուփ է ըրեր բերանս:
